մեզ աւանդ էին թողել, որ երբ լոյսը դայ մենք բերենք ձեզ յանձնենք այս աւանդները եւ խնդրենք, որ մեզ նորից ընդունէք ձեր մէջ, որտեղից հեռացրել էին բռնաւորները»։ Խնդրագիրը Կաթուղիկոսին ներկայացրին, որը ներկայացրեց փոխարքային, որպէս զի թոյլատրեն ժողովրդի ցանկութիւնը իրականացնելու։ 1883 թ. խնդիրը ետ եկաւ Կարսի նահանգապետին, որի օգնական դընդապետ պետանդերը պարտաւորւած էր զեկոյց տալու պետական խորհրդին այդ խնդրի մասին։ Որպէս պատմութեան ուսուցիչ ինձ հրաւիրեց պետանդերը տեղեկութիւններ տալու. պարտաւորւած էի Այվազովսկու՝ Օսմանեան պատմութիւնից եւ Զամչեանի էջերից՝ մի քանի երես թարգմանելու եւ յանձնելու։ Ապա պետանդերի հետ գնացի Ոլթիի գիւղերը այցելելու եւ գիւղացիների խոստովանութիւնները լսելու։ Ես պարտաւորւած այդ ճանապարհորդութիւնը կատարելուց յետոյ, ուզեցի այնտեղ մնալ, ինձ կանչեցին Ոլթեցի տնատէրերը աւան, որպէս զի նրանց գնած տների եւ այգիների յատակագծերը պատրաստեմ եւ նոր շինելիք բնակարանների եւ խանութների ուրւականները ծրագրեմ։ Այդ տեղ էր եւ Մկրը, եկել էր առնելիքները հաւաքելու։ Մկրի հետ նորից այցելեցի Տայոց քարի, Փանազկերտի, Ոլթիի եւ Բարդուզի հնութիւնները ու վերադարձայ Կարս։ Կիսկիմն ու Թոր-